- (6) Յաղթապանծ.—Ցաղթողի ձեւով:

(7) Ողուկ.—Վրան շիջակ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Հարմային գրելիք դասը ի՞նչ էր։ — Հարմա Թուղթը դիտելով ի՞նչ կը տեսնէ։ — Քոյրը ի՞նչ կ'ըսէ։—Թուղթին ճկուն եւ դիմացկուն ըլլալը ինչէ՞ն կը հասկնայ Հերժինէ։—Հարմա երբ Թուղթը կը պատուէ, ի՞նչ կը տեսնէ։—Ի՞նչ են այդ Թելերը։— Հարմա ի՞նչ կը հարցնէ իր քրոջը։—Քոյրը կրնա՞յ պատասխանել։— Ո՞վ կը գտնէ այդ հարցուժին պատասխանը։—Ուրիշ ինչէ՞ կը շին-ուի Թուղթը։



21. թԻթեՌՆԻԿԸ ԵՒ ԿԱԿԱՋԸ

Կակաջի(1) մը վրրայ կարմիր՝ կը Թառի(2) Թիթեռնիկ(3) մը Թեւիկներով իր քնքուչ(4): «Ուրկեն առիր կ'ըսե բուրումը(ծ) այդ անուչ
Որ աղուորիկ չափրակներեր(ծ) կը Թըուի ւ»
Աղնիւ ու բարի ըլալու համար
Աղնիւ ու բարի ըլալու համար

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Միշջ ջանա՛ բար ողոց հեջ ընկեռանալ, ուպես գի դուն ալ անոնց նմանիս։

- (1) Կակաջ.—Կաւմիւ ծաղիկ մր ու նու չունի (լալե):
- (2) Կը թառի.—Կը կենայ։
- (3) Թիթեռնիկ.—Գեղեցիկ թեւեւով թռչող միջաs մը (fkpkakl):
- (4) Քնքուշ.—Փափուկ:
- (5) Pourouf.-2ns:
- (6) **Շափբակ.**—Ծաղիկին թեւթեւը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Կակաջին վրայ ո՞վ կը Թառի։ — Ինչո՞ւ Թի-Թեռնիկը ծաղիկներուն վրայ կը Թառի։—Ի՞նչ կ'ըսէ Թիթեռնիկը կակաջին։—Կակաջը ի՞նչ պատասխան կուտայ։—Ազնիւ ու բարի ըլլալու համար ի՞նչ պէտք է ընել։



22. Խጊ ԱՄՏԱՆՔԻ ՁԱՅՆԸ

իրիկուն մը, դպրոցէն դարձին, փոքրիկ Ս,րմինեն ճամբուն վրայեն խաւաքարտե(՝) տուփ մը դտաւ։ Հեշտաքրքրըու նետմը(՝) րացաւ տեսնելու համար նե մէջը ի՞նչ կար։

Այդ տուփին մէջ լեցուն աղուոր բաներ կային. գոյնղգոյն(3) դերձաններ, ծրարներով ասեղներ, փայլուն մատնոցներ, ժանհակներ(4) և կապոյա, վարդադոյն

ժապաւէններ(6) կանդուններով :

Արմինե չատ հռանդով այդ ամենը աչքե անցուց, չետոյ հառաչանք մը արձակեց, կարծես ըսել ուղելով. «Մե՛ղք որ այս բաները իմս չեն։ Մայրիկս, որ աղքատ րով պիտի գործածէր, և ես ուզածիս չափ կապոյտ ու վարդադոյն ժապաւ էններ պիտի կապէի մազերուս :»

Սակայն առանց բնաւ վարանելու(6), աղջնակը տուփը Թևին տակ առաւ , և դպրոցին ճամըան բռնեց , ուրկէ արդէն չատ հեռացեր էր ։

«Տիկի՛ն , ըսաւ իր վարժուհինն , տեսէ՛ ը սա տուփը դատյ փողոցէն . աղուոր բաներով լեցուն է . անմի- չապես ձեղի բերի , որպես դի զայն կորմնցնողին տաւը , ենքե դայ ուղէ ։—Շատ աղեկ ըսաւ վարժուհին , համ- բուրելով Արմինեն յայտնելու համար անոր իր դոհունա- կունժիւնը ։ Ըսէ՛ նայիմ , տղջի՛կս , ո՞վ քեղի խրատ տուաւ որ այս տուփը քովդ չպահես ։ — Սա տեղես եկող ձայն մը , պատասխանեց Արմինեն ձեռքը սրտին վրայ դնն- գոմ ծայնը որուն վրայ կը խօսիք մեղի չատ ան- դամ նր առւփը դտայ , այդ ձայնը կը կրկներ ինծի . «Ցիչէ՛ , յիչե՛» և մտիկ ըրի իրեն ։

Երկու օր հաջը, տուփը տէրոջը տրուհցաւ. փոջընկ կառջով մը գիւղէ գիւղ պարտող փերեղակ([†]) մը կորմոցուցեր էր զայն։ Այդ մարդը ուղեց վեհանձնօրէն(⁸) վարձատրել(⁹) Արմինեն իր ուղղամաութեան համար, ընդունեցու:

FU.PABU.4U.C. — Ուղղամից մարդը միշց կը վարáwsrnih:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

⁽¹⁾ lumemfurm.—Taus haus be hurdr pnenp (Inchundu):

⁽²) Հետաքբքրութեամբ.—Ավեն բան ճասկնալու փափաքով։

^{(&}lt;sup>3</sup>) Գոյնզգոյն.—Տաբբեր գոյնով:

- (4) Ժանեակ.—Դերձանով կամ մեջաքսով շինուած ծակ ծակ ճիւսուածք (suüpki):
- (5) dununti.-Ubsufut cbrs (forskiw):
- (6) Վաբանելու.—Տաբակուսելու:
- (7) Փեբեզակ.—Մանբավաճառ:
- (8) Վեհանձնութեամբ.—Առաsութեամբ:
- (9) Վաբձատբել.—Փոխաբինութիւն ընել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.—Արժինեն ի՞նչ գտաւ ճամբուն վրայեն։ — Ինչո՞ւ բացաւ տուփը։ — Ի՞նչ կար տուփին ժեջ։—Արժինեն ինչո՞ւ ճառաչեց։—Արժինեն տուփը ի՞նչ ըրաւ։—Ի՞նչ ըսաւ իր վարժուճիին։ — Վարժուհին ի՞նչ հարցուց անոր։ — Ի՞նչ պատասխանեց Արժինեն։—Տուփը որո՞ւ տուին։ — Ո՞վ եր այդ տուփին տերը։ — Տուփին տերը ի՞նչ ըրաւ Արժինեին։

23. **Ա**LԿԷՈՆԻՆ(¹) ԲՈՅՆԸ

Օգոստոս ամսուան մէջ գիչեր մը, սև ամպեր արագ արագ հորիզոնեն վեր կը բարձրանային. հովը սկսեր էր փչել. փայլակները կը չողային(²), և հեռուէն կը սուէր որոտումին խուլ գոռումը։

Լուսիկ աճապարանքով(³) իր ծաղկամանները ներս կ՝առներ։

Յանկարծ փոխորիկը պայթերցաւ(4) ուժգին(5) :

Փութրիկ աղջիկը սարսափած փախաւ, պոռալով.

- —Մայրի'կ, մայրի'կ, ո'ւր ես :
- -Հոս եմ, դաւա'կս : ի՞նչ կայ :
- —Տեսար սա սարսափելի փայլակը որ կրակէ օձի կը նմանկը է Լսեցի՞ր որոտումին սոսկալի ձայնը է Ո՞հ,
- -«Հանդարտե՛, սիրելի աղջի՛կս, քովս եկո՛ւթ։ Երրա երկինք կ՝որոտայ, պէտք է խորհիլ Թէ չատ հազ-

տակ արկածի(8) մը ականտահա չեմ եղած(9)։ Եւ յետոյ,



մեջանդը։ Այս բոյնը փուքրիկ ծակ մը ունի երկին քին կողմը։ Թուխսը(11) հոնկե չունչ կ'առնեւ

«Փոխորիկին ատեն ծովը կ՝ալեկոծի, ջուրը կը բարձրանայ, հովը կը փչէ մոլեդին(12) և բոյնը կը ցնցէ(13) է Սակայն, մայրը հանդարտ կը քնանայ առանց վախնալու որ իր ձագերուն միջոցին ։»

հաղուադեպ է որ ալեկոծ ծովը Թուխսը կուլ տայ(14) ։

աղջիկս , և երբե՛ք մեր յոյսը չկտրե՛նը Նախաինամութենեն՝ կեանքի ցաւերուն , տրամութիւններուն և փոթոթիկներուն միջոցին ։»

FU. P. 1311.4U.C. — Մարդ ինչ դժրախութեանց ար հանդիպի, պես չե յուսանացի, որովնեսեւ Աստուած լկ'ուղունի ամեն անոնց որ իրեն կը դիմեն նաւատքով։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Ալկեոն.—Ծովային թույուն մը։
- (2) ևր շողային.—Կը փայլէին:
- (3) Անապատանքով. Փութով, շուջով:
- (1) Պայթեցաւ. Հոս կը նշանակէ՝ մեջջեղ ելաւ:
- (5) Ardaha.-Arday:
- (6) Հազուադէպ է.—Շաs քիչ կը պատահի:
- (7) Ս.դէտք. Մեծ դժբախութիւն:
- (8) Աւկած.—Դժբախ պատահաr:
- (9) Ականատես չեմ եղած.—Աչքովս չեմ sեսած:
- (10) Մամուռ. Բաբերու վրայ բուոնող խոտ մր (kounzն):
- (11) Թուխա.—Հաւերուն եւ թռչուններուն նոր ծնած ձագերը:
- (13) 86gbi.—Midny brbrgfibi:
- (14) **Կուլ տալ.**—Կլլել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ - Գիշեր մը ի՞նչ պատանեցաւ։ — Լուսիկ ի՞նչ ըրաւ: — Ի՞նչ ըսաւ իր մօրը։ — Մայրը ի՞նչ պատասխանեց իր աղ-ջրկանը։ — Շատ անգամ կայծակէն աղէտք յառաջ կուգա՞յ։ — Վախնալը օգուտ ունի՞: —Ալկէոնը ո՞ւր կը շինէ իր բոյնը։ —Թուխսը ուրկէ՞ շունչ կ'առնէ։ —Երբ փոթորիկ ըլլայ, մայրը կը վախնա՞յ։

1 139 - 130 1



24. ሀደሀՏበኑ ተ ነ ነ

— Փուքրիկ Թուչո՛ւն, ըսաւ տղան, Նայէ՛ աղուոր սա վանդակիս(¹), Քեզի համար հիւսեցի զայն Ոսկի Թելով որ մէջն ապրիս։

Գորդըդ(²) ծաղիկ, խչտեակդ(³) է լոռ(Կ). Քեղի կորեկ(Կ), Թուղ ու խաղող Պատրաստած եմ աղուոր աղուոր. Եկո՛ւր այստեղ, ոստերըդ Թո՛ղ ։

Թըոչունն ըսաւ . — Փո՛ քր աղջընակ , Քու վանդակեր ճոխ(⁸) ու փարթամ (⁷) Կը նախընտրեմ (8) ծառն ու ծըմակ (9) •
Ոչ Թուզ կ'ուզես, ոչ համադամ (10) •

Քու պալատիդ(11) մէջ ծիածան(12) Դուն բանտարկել կ'ուղես գիս զատ, Բայց կեան ըն անկախ՝ կեան ը է միայն. Ապրիլ կ'ուղեմ ես հոս աղատ։

PUP ՈՅՍԿԱՆ. — Աւելի աղեկ ե աղքաs ըլլալ եւ աquis, քան թե հաrnius եւ գեrի:

ԲԱՑԱՏՐՈՒ₱ԻՒՆՆԵՐ

- (1) Վանդակ.—Թելեrով կամ փայsիկնեrով շինուած ծակ ծակ փոքրիկ շենք մր ուր թռչունները կը պահեն:
- (2) Գոգ.—Գեհինը փռելիք կապետ (խալը):
- (4) Lan. Vuulnin:
- (⁵) Կորեկ.—Թոչունի ուsելիք:
- (6) Anlu.-Lurnius:
- (7) **Durpud.**—Lurnlus:
- (3) Կը նախընտբեմ.—Աւելի կը սիբեմ։
- (9) Tuly.-Ulsun:
- (10) Համադամ.—Աղուու ուջելիքներ:
- (11) Պալատ.—Թագաւորի բնակարան։
- (12) **Ծիածան.**—Գոյնզգոյն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.—Տղան ի՞նչ ըսաւ Թռչունին։ — Տղան ի՞նչ ուտելիք պատրաստեր էր Թռչունին։ — Թռչունը ի՞նչ պատասխան տուաւ տղուն։—Ինչո՞ւ Թռչունը չէր ուզեր այդ գեղեցիկ վանդակին մէջ ապրիլ։

25. **UUSTN8C**

Մեծահարուստ(1) այրի տիկնոջ մը մէկ հատիկ աղջիկը հիւանդացաւ ու մեռաւ։

Երկար տարիներ խեղճ կինը լացաւ ողրաց իր աղջ-

կան վրայ գոր հոգիին պես կր սիրեր:

Բնաև մօտաւոր ազգական մը չուներ, որո՞ւ պիտի ձգեր իր մեծ հարստութիւնը։

անգարի նքնաև ին հանի երբևաւը ։ Նանց միշնիր եպը չէն ժարթն անրանրի ամջին շն սե

Acump Spang of funpstigue:

նիկրրևն սեսրն դառիր աղէր դահե ժովրոասվ ին խօոբև,

Մեծ հանդէս մը տուաւ. պար, երգ, լտեսակ տեսակ խաղեր, ամէն տեսակ զուտրձութիւն կար և վերջն ալ վիձակահանութիւն մը տեղի ունեցաւ զանազան պարդեւներով(²), ինչպէս գոհարներ(³), աղուոր կերպասներ, զմայլելի հովահարներ, Էնկարներ(՝) պարունակող դիրջեր, և չատ մին ալ պակաս արժէջ ունեցող առարկաներ՝ սակայն ամէնջն ալ սիրուն և հաձելի։

դրուժիւն կ'ըներ Թէ ամէն որ(¹) ի՛նչ պիտի ընտրեր արտուժիւն կ'ըներ Թէ ամէն որ (¹) ի՛նչ պիտի ընտրեր արտուհին արտուհին այս արտարանը և ուշա-

դեսա, աշխատասէր և լուրչ(⁹) էր։

Ֆեսա, աշխատասէր և լուրչ(⁹) էր։

FUՐՈՑԱԿԱՆ. — Աշխատահեր օղան ամենուն սիrելի ե, եւ ան ե որ կը վարձատրուի։

ԲԱՑԱՏՐՈՒՔԻՒՆՆԵՐ

- (1) Ubduhuraum. Tus huraus:
- (2) Պարգեւ.— Նուէր:
- (3) Գոհաr.—Շաs սուղ եւ գեղեցիկ քաr:
- (4) Նկաւ-Գունաւու պատկեւ:
- (5) Շագոյբ.—Պայուսակ:
- (6) Carbi.—Բանի վր հաւնելով ուբիշներեն զացել:
- (7) Walth of .- U.dth dtyp:
- (8) Թանկագին.—Սուղ:
- (9) Լուբ.-Խելքը գլուխը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Մեծանարուստ տիկնոջ աղջիկը ի՞նչ եղաւ:—
Տիկինը որո՞ւ ուզեց ձգել իր նարստութիւնը:—Ի՞նչ միջոցկաորնեցաւ
արժանաւոր աղջիկ մը գտնելու նամար:—Վիճականանութեան մէջ
ի՞նչ պարգեւներ կային: — Ամէն աղջիկ ի՞նչ կը քաշէր շագոյրին
մէջէն:—Տիկինը ի՞նչ կ'ընէր:—Տիկինին նաւնած աղջիկը ի՞նչ պարգեւ ընտրեր էր:—Ինչո՞ւ տիկինը այդ աղջկան նաւնեցաւ։



26. LեՒՈՆ ՎԵՐՋԻՆ

Հայոց վերջին Թադաւորը կը կոչուի Լեւոն Լուսին. հան, որ քաջ և առաքինի(1) մարդ մըն էր։

արտարանար արանը հայարի արան արտան արտանի արտանար արտա

Այնտեղ անօթի մնալով, ամէնքը ստիպուեցան կատուի և էչու միս ուտել. յետոյ բոլորակին սով(3) տիրեց, և Հայոց Թագաւորը անձնատուր(4) եղաւ ու գերի բըունուեցաւ և Իրեն հետ գերի բռնուեցան նաև իր կինը՝ Մարիամ Թագուհին և իր աղջիկը՝ Ֆիմի ։

Աստար ամեր արի ։ Մասին եւ թը տարի ։ Երբ ազատ Թողուհցան, Լեւոն Թագաւորը իր կնոջը և աղջկանը հետ ուխտի գնաց Երուսաղէմ և Հոն Մարիամ և Ֆիմի Ս. Յակոբայ վան քը մտան ուր ապրեցան մինչեւ իրենց կեսն քին վերջը ։

Իսկ Լեւոն գնաց Եւրոպա , ուր Թագաւորներ հիւրըն-

புயு நிரும்(⁵) விரும் நமு :

1393ին մեռաւ Հայոց վերջին Թադաւորը Բարիդի մէջ։ Սէն-Տընի եկեղեցիին մէջ ցարդ կը մնայ իր դերեզմանը, որուն վրայ կ երեւայ իր արձանը պառկած,
իր արջայական նշաններով, ծիրանի(6) հագած, դլուխը
Թադով պսակուած, ձեռքը մական(7) բռնած և ոտքե-

բԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Առաքինի.**—Բաrի եւ պարկեշց:
- (2) Abry,-Furår yustrny chif up:
- (3) Und.—Ուsելիք չգsնուիլը:
- (4) Անձնատուբ եղաւ-- Ինքզինքը թշնավիին ձեռքը յանձնեց:
- (6) Հիւբընկալեցին.—Ընդունեցին:
- (6) Ծիռանի.-Թագաւուներու յատուկ կարմիր վերարկու:
- (7) Մական. Թագաւուական գաւազան։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞վ է Հայոց վերջին Թագաւորը։ — Ի՞նչպէս մարդ էր։—Թագաւոր ըլլալէն ետքը ի՞նչ ըրաւ։—Թշնաժիները ի՞նչ ըրին իրեն։—Այնտեղ ի՞նչ պատահեցաւ։—Ինչո՞ւ անձնատուր եղաւ թշնաժիին։—Գերի բռնուելէն ետքը ո՞ւր տարուեցաւ։ — Ո՞վ կար իրեն հետ։ — Ո՞րչափ ատեն Եգիպտոս ճնաց։ — Երբ ազատ Թողուեցան ո՞ւր գացին։—Մարիաժ եւ Ֆիժի ո՞ւր ապրեցան անկէ ետքը եւ ո՞ւր ժեռան։— Լեւոն Թագաւորը ո՞ւր գնաց։ — Ո՞ւր ժեռաւ։ — Ո՞ւր ժեռաւ։

27. ԱՂՈՒՈՐ ԱՍՏՂԻԿԻՆ

Աղուոր աստղի'կ դուն ոսկերես(1) Որ երկին թին մեջ կ'ապրիս, Ծաղի կ մրն ես, կանվեն դ մրն ես, Op jajunifpg 4'miphu ahus U.h. , who and if high'p goets dup U. յդ ամպերուն լեռներէն, ரு வாட்டு விரும் பிரும் பி be up Pragued play Supplies Կամ երկնցուր ինձ լուսափայլ(3) Ելնարան(4) մր արծախ , Un வுளைதாள் கடிக்க நாளி மா காளி Lasupa upunhu வீட்டு சய செட்டு (5) : կամ ինծի տուր, փութրիկ արեւ, Uhd Angueth quiq(6) Abelon Финперр що иперр пе Выдые, Op whatiging parper deps

FUSUSPNN-₽ԻՒՆՆԵՐ

- (1) Ոսկեգէս.—Ոսկիի զոյն պոչով։
- (2) Վառ վառ.—Փայլուն:
- (3) Լուսափայլ.—Լոյսով փայլուն:
- (4) Ելնաբան.—Շաբժող սանդուխ։
- (6) Ծաթել. Փայլիլ:
- (6) Anjq.-brunt hus:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ինչո՞ւ տղան աստղիկին «ոսկեգէս» կ՚ըսէ։—
—Ինչո՞ւ «ծաղիկ ես» կ՚ըսէ։ — Ի՞նչ ըսել է ամպերուն լեռներէն։
—Տղան ինչո՞ւ կ՚ուզէ որ աստղիկը ելնարան մը երկնցնէ վար։—
Ինչո՞ւ Թռչունի Թեւեր կ՚ուզէ ունենալ։

28. ԾԱՂՐԱՆՔԻՆ ՊԱՏԻԺԸ

Անառուան մէջ, կիրակի առտու մը, ոզնին(1) դաչտերը պտրտելու դնաց, մինչ իր կինը, տնակին մէջ, ցորեկուան կերակուրը կը պատրաստէր։

Մացառի մը մօտ նապաստակ մը ելաւ դիմացը, ու

հարցուց իրեն.

— Պարտելու հլայ , պատասիսանեց ոզնին <u>։</u>

_ Պարտելո՞ւ , ըսաւ նապատակը խնդալով · այդ ծուռ

ոհաւր երբևով իչրչ ամաւսև տասու ի,նենան ։

րրով աստաց. Ույս խոսացը ոզներն ջիղերուն դարւ, և ինւքզին քին

- Կը կարծես թե քու սրուն ըներդ իմիններես աղե՞կ են։

-Ո'ակվա ատևականո չի դբևնրբև ւ

_Կը սխալիս, գոչեց ողնին. գրաւ կը դնեմ որ ես

քեզմ չուտ կը վաղեմ:

- իջըչ գրաւ վրբըը ։ —Ո՛նե ջուս ոհաւր՝ երրիս, վե . իրե, րե բո ՝ իրչ բո ՝ առ —Ո՛նե ջուս ոհաւր՝ երրիս, վե . իրե, րե բո ՝ իրչ բո ՝ առ —Ո՛նե ջուս ոհաւր՝ երրիս, վե . իրե, րե բո ՝ իրչ բո ՝ առ —Ո՛նե ջուս ոհաւր՝ երրիս, վե . իրե, րե բո ՝ իրչ բո ՝ առ —Ո՛նե ջուս ոհաւր՝ երրիս, վե . իրե, րե բո ՝ իրչ բո ՝ առ —Ո՛նե ջուս ոհաւր՝ երրիս, վե . իրե, րե բո ՝ իրչ բո ՝ առ —Ո՛նե գուս ոհաւր՝ երրիս, վե . իրե, րե բո ՝ իրչ բո ՝ առ
 - -Շիչ մը գինի և օխա մը ստեպղին(²):

_Շատ աղեկ, օ՛ն սկսինք։

_Ո՛չ, առարկեց ողնին. հա այս առաու դեռ բան մը չեմ կերեր. հոս սպուսէ՛. տուն երժամ, պատառ մը բան ուտեմ. կէս ժամէն կուգում։

աուն վազեց, միաքը դնելով որ աղուոր իաղ մը իսաղայ

որժարկ արտուրիը սև միր են գամերև բև ։

— Կսի՛կ, ըսաւ, չո՛ւտ հետս դաչտ եկուր։ Նապաստակի մը հետ չիչ մը գինի և օխայ մը ստեպղին գրաւ դրի պնդելով որ ես իրմէ աղէկ կը վազեմ։

- խենդեցա՞ր, ի՞նչ եղար, ըսաւ խեղճ կնիկը դող

ելլելով . դուն նապաստակին հետ կրնա՞ս մրցիլ ։

—Ատ իմ գիտնալիք բանա է. դուն իմ գործիո մի՛ խառնուիր, միայն հնազանդէ՛։

կինը անոքիջապես ճամրայ ելաւ , և ամուսինը հետև-

եալ հրահանգները(3) տուաւ անոր.

—Աղէ՛կ մաիկ ըրէ. սա մեծ դաչտին մէջ պիտի վազենք. նապաստակը մէկ կողմէն, և ես՝ միւս կողմէն։ Դուն այստեղ պահուրտէ, և երբ նապաստակը մօտենայ, երեւան ելիր ու ըսէ՛. «Ես քեղմէ առաջ հասայ։»

Bետոյ կնոջը ցոյց տուաւ պահուրտելի ը տեղը, և ինւբ

Strangue 1

Նապաստակը որ իրեն կ՝սպասէր, «Մէկ, երկու, երեւք» գոչեց, ու նետի պէս մեկնեցաւ։ Ողնին մէկ տեցաւ։

երբ ճապաստակը դաչտին ծայրը հասաւ, ողնիին կինը երեւան ելլելով դոչեց. «Ես քեզմէ առաջ հասայ «»

Արագաջայլ(*) կենդանին ապչած(⁶) մնաց, որովհետեւ ցաւ վճարել չիչ մը դինին և օխայ մը ստեպդինը, որուն ջուրովը աղուորիկ ապուր մը եփեց ողնիին կինը իրիկուան աչին համար չ

FULTIBULU. — That is triple ounted nichzliter, nendfileste ountenne zus անգամ ծաղթանքի առարկայ կ՛րդայ։

FUBUSCALBHALDUEC

(1) Ոզնի.—Կենդանի մը ուուն մ աւմինը ամբողջ փուշեւով ծածկուած է։

(2) Ստեպրին.—Կաrdիr պոուղ մր (հավուն):

- (3) Հրականը. Պատուէր։
- (4) **Առագաքայլ.**—Շու քալող:
- (5) Ապշած. Շփոթած, շուաւած։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. – Ոզնիին դիմացը ո՞վ ելաւ։ — Նապաստակը ի՞նչ հարցուց ոզնիին։ — Ի՞նչ պատասխանեց ոզնին։—Նապաստակը կը ի՛նչ ըսաւ անոր։—Ոզնին ի՞նչ բանի գրաւ դրաւ։ — Ցետոյ ոզնին ո՞ւր գնաց։ — Ոզնին ի՞նչ ըսաւ իր կնկանը։ — Կինը ի՞նչ ըրաւ։ — Ոզնին ի՞նչ հրահանգ տուաւ իր կնկանը։—Նապաստակը ի՞նչ ըրաւ։ —Ոզնին ի՞նչ ըրաւ.—Ոզնիին կինը ի՞նչ ըրաւ։—Գրաւը ո՞վ շահեցաւ։—Ո՞վ վճարեց շիշ մը գինին եւ ստեպղինը։

29. ዓሀՄԵՐԸ


Հարմային գրպանները միչտ լեցուն են ամէն տեսակ ըստ կայ մէջը գնդակներ, դանակ մը, հոլ(1) մը, առասան(2), և դեռ ուրիչ բաներ ։

Մ.յսօր նոր տեսակ մըն ալ աւելցած է, երեք հատ

գամ, նոր նոր աղուոր ։

Մերթ ընդ մերթ (3) տնոնց վրայ կը նայի և կ'ուրախանայ ։ Մերթ ընդ մերթ (3) տնոնց վրայ կը նայի և կ'ուրախանայ ։ Ի՞նչ փայլուն են , և ի՞նչ սուր է ծայրերնին , ի՞նչ աղուոր

—Աստնւք արծախ են, չէ՞, ըսաւ Հարմա իր քրոջը։ Հերմինե իննդաց իր եղրօրը միամաուխեանը վրայ։ —Ո՛չ, Հարմա, ըսաւ, արծախէ դամ չի չինուիր։ Մածախը կակուց է և դիւրաւ կը ծռի։ Արծախէ դամը



չի երնար կարծը(4) փայտի մը մէջ մտնել ։ Ցետոյ դամերը պէտ.ը է աժան բլլան , և արծախը սուղ է ։

—Ուրեմն ի՞նչ են , հարցուց Հարմա , չատ ցաւելով իր գամերուն արծախ չրլլալը իմանալով ։

-Երկաթ են, պատասխանեց Հերմինել։

— Երկաթ են մի՞, պոռաց Հարմա, ի՞նչ կ՝ըսես, ասանկ փայլուն երկաթ տեսած ունի՞ս։

— Երբ երկաթը ժանգոտ կամ ներկուած չէ, փայլուն կ'ըլլայ. նայէ՛ մայրիկին բանալիները,

Հարմային սիրաը կոտրեցաւ ։

Բայց հիմայ որ գիտէ Թէ կը ժանդոտին, կ'ուզէ գիտնալ նաև Թէ ինչպէս կը ժանդոտին։

—Գամերդ ինծի տո՛ւր, կ՛րսէ քոյրը, զանոնք չուրով Թրջեմ և պատուհանին առջեւ դնեմ. վաղը առտու ժանդոտած պիտի ըլլան ։

Հարմա դամին մէկը միայն կուտայ. մէկ հատը կը բաւէ, ենէ անիկա ժանդոտելով աւրուի, դոնէ միւս երկութը փայլուն կը մնան։ Հետեւեալ առտուն , անկողնեն ելածին պես Հարմա պատուհանը կը վաղե , կը բանայ ։ Ինչ տեսնե , գամին վրայ չատ մը կարմիր արատներ(⁵) կան ։

— Ժանգը աս է, ըսաւ քոյրը, են է աւելի երկար ատեն դուրսը ձգես, գամգ բոլորովին ժանգ պիտի դառնայ։ Երկանը խոնսուունեան չի դիմանար։ Ասոր համար է որ կը ներկեն զայն երբ հարկ ըլլայ բաց օդին ու անձրեւին մէջ նեղուլ։

ԲԱՑԱՏՐՈՒԺԻՒՆՆԵՐ

- (1) Հոլ.-Խաղալիկ մր ու իւ վւայ կը դառնայ։
- (2) Առասան.—Բաբակ չուան:
- (3) Մեւթ ընդ մեւթ.-Եւբեմն:
- (4) 1mrdr.—2dnnq (ukrp):
- (5) U.rum.—Phð (1kfk):

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Հարմային գրպանը ի՛նչ կը գտնուի միշտ։—
Ի՞նչպէս են այդ գաժերը։—Հարժա ի՞նչ կը հարցնէ քրոջը։—Հերմինէ ի՞նչ կը պատասխանէ։ — Գաժերը ի՞նչպէս կը ժանգոտին.—
Ինչո՞ւ համար բաց օդին ձգուելիք գաժերը կը ներկեն։



30. ՆԱՊԱՍՏԱԿԸ

Այդպես ինկած դաչտ անտառ, Ո՞ւր կը վազես անդադար, Հերի՛, ք վազես, ա՛լ հերի, ք։

Ականջներըդ տնկած վեր, Կ՝անցնիս լեռներ ու սարեր(1). Անօթի՞ ես, ծարա՞ւ ես Որ կը Թուիս հովի պէս։

ինչ որ կ՝ուզես քեզ կուտամ, Կերակուրներ համադամ(²)։ Շաքա՞ր կ՝ուզես Թէ պիստակ(³), Ո՛վ անուչիկ նապաստակ։

Ելլայր Ֆրժի օնօհուն։ Եր Ֆրբրենը և Վենիո ար ջան Երև մե Ծավես ըստրնի, և Երև մե Ծավես ըստրնի, և ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Նապաստակը չոր,ըոտանի սինուն կենդանի մըն է որ աչխարհի ամէն կողմը կը գըտնուն կենդանի մըն է որ աչխարհի ամէն կողմը կը գըտնուն և կումանի(հ) արմատներ, խոտեր, տերեւներ,
պտուղներ և հունտեր կրծելով ւ Նապաստակները ցորեկները իրենց որջէն(հ) դուրս չեն ելլեր չատ վախկոտ ըլլալնուն պատճառաւ, և միայն դիչերները ուտելի,ը գըտնաև միչտ աչջերնին բաց, այն,ըան սուր ականջ ունին,
որ տերեւի մը չարժիլը լսելով կ՝արժննան ւ Իրենց առջեւի ժաժերը ետեւի ժաժերէն կարճ ըլլալուն չատ
աւելի դիւրուժեամը վեր կ՝ելլեն լեռներէն, ,ըան ժէ կ՝իջնեն, և չատ արագընժաց(հ) են է նօժը կամ ուժը տարի
միայն կրնան ապրիլ է Առանձին կը ընակին և ձայն ձուն
չեն հաներ մինչև որ մէկը չնեղէ դիրենը,

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Սաւ.-Լեւան գլուխը:
- (2) Համադամ.—Համով եփուած։
- (3) Պիստակ.—Պուղ մր (*fpuspf*):
- (4) Լայնածիւ.—Լայն։
- (5) Կը սնանի.—Կր կեռակուր:
- (6) Ուջ.—Անասունի բնակառան:
- (7) Աւագրնթաց.—Շուհ քալող:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.—Նապաստակը ի՞նչպէս կենդանի է։ — Ո՞ւր կը գտնուի։—Ինչո՞վ կը սնանի։ — Ե՞րբ դուրս կ'ելլէ որջէն։ — Ինչո՞ւ համար ցորեկները և պարտիր։—Նապաստակները ի՞նչպէս կը քնա-նան։ — Նապաստակներուն ականջը ի՞նչպէս է։ — Առջեւի՞ Թա-թերնին երկայն՛,է, Թէ ետեւի։ — Աւելի դիւրաւ վե՞ր կ'ելլեն, Թէ վար կ'իջնեն։—Քանի՞ տարի կ'ապրին։—Շատ կը պոռա՞ն։



31. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Աղուէսը օր մը սեղան պատրաստեց մացառի մը չուքին տակ, և արադիլը(՝) ձաչի հրաւիրեց ։ Ճաչը պարգ էր, մէկ տեսակ մը ապուր միայն զոր տափակ պնակի մը մէջ լեցուցած ըերաւ ։

Արադիլը, որուն կտուցը չատ երկայն ու բարակ է, չկրցաւ փչրանք մը բան ուտել այդ պնակին մէջէն, և բոլոր կերակուրը աղուէսը ինչը լափեց։

Արագիլին սիրաը չատ վիրաւորուեցաւ այս ան,քաշ ղաքավար շիւրընկալութեննեն(²), և միտ,քը դրաւ որ ին,ք ալ խաղ մը ընկ անոր փոխարէն։

Ուստի քանի մը չարտվե հաքը գնաց աղուէսին աղաչեց որ ձաչի գայ իրեն. «Կը խօսինք կը խնդանք, կ'ուտենք կը խմենք, և աղուոր ժամանակ կ'անցընհնք,»

Աղուէսը ուրախութեամբ ընդունեց այս հրաւէրը, և որոչեալ ժամուն ելաւ դնաց։ Համեղ կերակուրին հոտը աշխարհը բոներ էր, և աղուէսին ախորժակը հետզհետէ աւելի կը ըացուէր։

անվուրին վրայ չարունակ կը դառնային։ արադիլին չատ ծախչե ելեր ես , սիրելի բարեկա՛մս ,» ու անհամրեր կ՚սպասեր համադամ Հագալներուն որոնչ

Մէյ մըն ալ նայիս , աղուոր ամանի մը մէջ սեղան բերուեցաւ ճադարին միսը ս.քանչելի խորոված ․ դժրախտաբար ամանին բերանը նեղ ու վիզը չատ երկայն էր ։

Արագիլը տնմիջապէս կտուցը խոթենց ու սկս**աւ** ախորժակով ուտել։

Բայց աղուկսին ցոուկը լայն էր ու անոր մեջ չէր

Ուստի անօքի ծարաւ իր տունը դարձաւ, սաստիկ նեղացած, ականջները կախ ։

Մինչ արագիլը խնդալով կը պոռար ետեւէն.

«Սնաւչնե՛ր ըլլայ, ազուէ՛ս եղբայր. երբ որ կ՚ուզես հրամմէ նորէն։»

FULTIBULLUL. — Ինչ որ ընես, ան կը գջնես. ուսջի պետք ե բարութեամբ ու քաղաքավարութեամբ վարուիլ ամենուն նեչ, եթե կ'ուզենք որ անոնք այ նոյնպես վարուին ուին մեզի նեչ:

FU8USPNԻԵԻՒՆՆԵՐ

(1) **Ա**-ագիլ. - Եւկայն ունեւով, եւկայն կուցով թույուն մրն է

(2) Հիւբընկալութիւն.—Հիւբ ընգունիլ: (*լեյլեկ*):

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Աղուէսը ո՞ւր սեղան պատրաստեց։ — Զո՞վ հրաւիրեց։—Ճաշը ի՞նչ ամանի մէջ բերաւ։—Արագիլը ինչո՞ւ չկրցաւ ուտել։—Ո՞վ կերաւ կերակուրը։—Արագիլը ի՞նչ ըրաւ ասոր փոխա-րէն։—Արագիլին բերած կերակուրը ի՞նչ տեսակ ամանի մէջ դրուած. Էր։—Ո՞վ կերաւ այդ կերակուրը։—Ինչո՞ւ աղուէսը չկրցաւ ուտել։—Արագիլը ի՞նչ պոռաց աղուէսին։



32. 9 4 9 h 4 U

Այս պատկերին մէջ կը տեսնէք արձան(1) մը և երկար մօրուքով , պատկառելի(2) մարդ մին է , դլուխը ապարօչ(3) փաթթան և երկար վերարկու մը հագած որ մինչեւ ոտքերը կ'իջնէ ։ Ասիկա Հայոց Բագրատունի թագաւորներէն Գադիկ Աի արձանն է որ վերջերս դանունցաւ Անիի աւերակները փորուած միջոցին ։

Այդ արձանին քով եկեղեցական մը կեցած է, ան

ալ Իզմիրլեան կախուղիկուն է որ լուսանկարուած(*) է Անի գտնուած ատեն ։

Գագիկ Ա նչանաւոր եղած է իր խելքով ու իր գործերով ։ Ինւք Հայաստանի մէջ առաջ տարած է երկրագործութիւնը(⁵) և վաճառականութիւնը(⁶) , վանքեր ու դպրոցներ հաստատած է , և եկամուտներ(⁷) կապած է եկեղեցիներուն և եկեղեցականներուն ։

երևսուն տարի թագաւորած է Սաիի մէջ ասկէ ինթ դար առաջ, ուր չինել տուած է մեծ ու փառաւորեկե

դեցի մր , Ս . Գրիգոր Լուսաւորիչ անունով ։

իր կինն ալ , Կատրամիտէ Թագուհին աւարտեց Անիի Մայր Եկեղեցիին չինուԹիւնը զոր Սմբատ Թագաւորը սկսած էր , և որուն պատկերը տեսա,ը տրդէն ։

ԲԱՑԱՏՐՈՒՔԻՒՆՆԵՐ

(1) Պատկառելի.—Ցաբգանք ազդող։

(2) Արձան.—Քաբե կամ գանե շինուած կերպարանք։

(3) Ապաro2.—Գլխու փաթթոց:

(4) Լուսանկաբել.—Պահկերը քաշել:

(5) **Երկրագործութիւն.**—Հողը փորել, ցորեն, գարի եւայլն ցանել ու բուսցնել։

(6) **Վանառականութիւն.**—Առուsուr ընել:

(7) Bludnem.—Thufbert, sneutrt, stytet ununud duraf:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ•—Այս պատկերին մեջ տեսած արձաննիդ ի՛նչպես է։—Որո՞ւն արձանն է այն։ — Քովը գտնուող եկեղեցականը
ո՞վ է։—Գագիկ Ա Թագաւորին արձանը ո՞ւրկէ գտնուեցաւ։—Ի՞նչպես Թագաւոր էր Գագիկ։—Ի՞նչ նշանաւոր գործ ըրած է։ — Որչա՞փ ատեն Թագաւորած է։—Քանի՞ դար առ.աջ։—Անիի մեջ ի՞նչ
շենք շինել տուած է։—Իր կինը ի՞նչ գործ ըրած է։—Ի՞նչ է իր կնոջ
անունը։



33. Ф Н И Н 4 И

Փափուկ մուշտակով(1) ազուորիկ փիսի՛կ,
Եկո՛ւր քընացիր հոս ծունկիս վրայ,
Աչուկըդ դոցէ, և մըչիկ մըչիկ
Հանզչէ՛ հանդարտիկ, քունդ անուշ ըլլա՛յ։
Դուն չար կատու չես, չես հանկուտեր գիս,
Օր մը դպած չես իմ Թել մը մագիս։
Փայլուն աչուկներդ յակինԹի(2) նըման,
Երբ ինծի նայիս, կր ինկուն կարծես.

Փայլուն աչուկներդ յակինքի(²) նըման, Երբ ինծի նայիս, կը խնդան կարծես, Ու Թաքիկներդ ալ Թաւիչ(³) կը դառնան Երբ անոնց ծայրով իմ դէմքս չոյես(⁴)։

Դուն գող կատու չես , չես լացըներ գիս Օր մը դպած չես հացիս կամ կաթիս ։

FU8USPNAPAAVVEP

- (1) Uniquely.-Ulaunich diagns ihre (fhirf):
- (2) **Ցակինթ.**—Ծանrագին կառմի քաւ մը (հացութ):
- (3) Duch 2. Wugns desufut heryau un (fushek):

(4) **Շոյել.** - Շոյել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ կ'ըսես փիսիկիդ։ — Փիսիկդ չա՞ր է։ — Կը ճանկուտէ՞։—Փիսիկիդ աչուկները ինչի՞ կը նմանին։—Թաթիկները ի՞նչպէս կ'ըլլան, երբ դէմքդ շոյէ։—Փիսիկդ զքեզ կը լացնէ՞։



Մեռնի՛նը հայրենիքին համար։ Ֆրանսացիները 1870 ին կը պատերազմէին Գերմանացւոց հետ։

Բախաը Գերմանացւոց կողմն էր այս անդամ, և Ֆրանսացի,ը, հակառակ իրենց քաջուԹեան, պարտուեցան ։

Երբ Բրուսիացի,ը Մէցի(1) մօտեցան, բոլոր ընակիչները ձգեցին փախան։ Շրջակաները ագարակ մը կար, որուն մէջ աղջիկ մը պահասյան ձգեր էին։

Երբ [ժշնամի գինուորները եկան տունը պաշարելու(²), տեսան աղջիկը, և առին ի ենց պետին(³) .pnվ տարին ։

Սպան(4) աղջկանը ըսաւ.

—Մի՛ վախնար , քեղի չարիք մը չենք ըներ , միայն հարցումներուս պատասխան տո՛ւր ։ Երկու ժամ աշուտջ ֆրանսական բանակ(5) մը անցաւ հոսկէ , ո՞ր կողմ գնաց ։

Աղջիկը տժգունեցաւ(6), յետոյ վայրկեան մր մտածելէ ետ.թը , պատասիսանեց .

-Ֆրանսացի եմ ես, և չեմ կրնար ըսել ձեզի ինչ

որ կրնայ Ֆրանսացիներուն վնաս պատճառել ։

—Հիմակ գաղանիջը ըեթներ կ'առնեն,ը, յարեց բրուսիացի սպան, և զինուորներուն դառնալով, պոռաց.

— Չինսուորնե՛ր, դուրս հանեցէ՛ք այս աղջիկը և պաախը կապեցեր:

Սպային հրամանը գործադրուեցաւ(1), և վեց հոգի կարգաւ չարուեցան, հրացաննին աղջկանը ուղղած, իրենց պետին հրամանին սպասելով քաշելու համար։

— Հիմայ , ըսաւ սպան աղջկանը , հիմայ խout' նայիմ։

Unghlip inch hague:

- Նորեն կր հրամայեմ .phap, խօսե՛ :

Trupation [men 4hgue :

- Զինուորնե՛ր , կրա՛կ :

Եւ դիւցազն(8) աղջիկը ինկաւ մեռաւ գնտակահար(9) »

FU8USՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Մէց.-Գեւմանական քաղաք մր։
- (2) Muzurt .- Tryunust :
 - (3) Պետ.-Մեծ։
 - (4) Սպայ.-Մեծ զինուուական:
 - (5) **Բանակ.**—Շաs զինուուներու խումբեր:
 - (6) **Տժգունեցաւ**.—Գոյնը նե**ւ**եց:
 - (7) Գուծադրուեցաւ.—Կա**sաrուեցա**ւ:
 - (8) **Դիւցազն.**—Մեծ քաջութեան str:
 - (9) **Գնտակահաւ**.—Գնոակներէ զաբնուած:

ZԱՐՑՈՒՄՆԵՐ. — *Ֆրանսացիները ե՞րբ* պատերազմեցան Բրուսիացւոց հետ։—Ո՞վ յաղթուեցաւ։ — Երբ Ֆրանսացիք փա– խան, ագարակին մէջ ո՞վ ենաց:—Թշնամի զինուորները աղջկա**նը** ի՞նչ հարցուցին։ Աղջիկը ի՞նչ պատասիսանեց։ — Ետքը ի՞նչ պատահեցաւ:-Ֆրանսացի աղջիկը ինչո՞ւ ժեռաւ։



35. ԽեԼԱՑԻ ՇՈՒՆ ՄԸ

Մեծ քաղաքի մը մէջ քանի մը բարեգործ(1) տիկիններ մեջերնին դրամ ժողվեր էին, և ամեն օր խեղջ

կես օրին, աղջատները կու գային ցած տնակի մը առջին, զանգակի մը չուանը կը քաշէին, պզտիկ պաաուհան մը կը բացուէր գրեթե դետնին հաւասար, և ուրակ որ կերակուր կը դրուէր պատուհանին առջեւ։ Ծերունին իր հետը բերած ամանին մէջ կը լեցներ կերակուրը և կ'առներ կը տաներ։

Ցետոյ, ուրիչ մը կու դար, և ամէն.ըն ալ իրարու

բաթւէ իրենց կերակուրը առնելով կը մեկնէին։

Շուն մը, որ միչտ այն տեղուան,քը կը պտըտէր, անոնց ըրածը ուչադրուխենամը դիտեց, ծերունիներուն տեսնելով որ գին,քը մտածող չկար, որոչեց ին,ք իր գրլխուն ձարը տեսնել։

Օր մը , աղջատներուն մեկնելէն ետջը , գնաց ինջ ալ զանգակին չուտնը ջաչեց . պատուհանը բացուեցաւ , և պնակ մը կերակուր երեւան ելաւ ։ Շունը տնմիջապէս լափեց(³) գայն ու հեռացաւ ։

Այս յաջողութեննեն(4) ,քաջալերուած(5) , խելացի կենդանին սկսաւ ա՛լ ամեն օր պատուհանին առջին ներկայանալ ։

Ծառանները հասկցան չանը վարպետութիւնը, րայց ծայն չհանեցին, ուղելով կերակրել այդ չունը որ այդ քան խելք ցոյց կու տար փորը կչտացնելու համար։

ԲԱՑԱՏՐՈՒԺԻՒՆՆԵՐ

- (1) Թաբեգուծ.—Բաբիք ընող։
- (2) **Սլքտաց.**—Պորոկեցաւ:
- (3) **Լաւիել.**—Շուs շուs ուsել:
- (4) Յաջողութիւն.—Գուծի մը գլուխ ելլելը:
- (5) Քաջալեrուած.—Ուժ առած։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.—Բարեգործ տիկինները ի՞նչ կ'ընէին։ — Պատուհանին առջեւ ի՞նչ կը դրուէր։—Ծերունին ի՞նչ կ'ընէր։—Շունը ի՞նչ ըրաւ։—Շունը ժէ՞կ անգաժ ժիայն քաշեց զանգակին չուանը. —Ծառաները ի՞նչ ըրին։



Պօղոս պրտոյտի տարած էր Պիժուն, Տան պահապանը, հաւատարիմ չուն. Եւ անոր մէկ փութը յանցանւք՝ն համար Տրւած էր իսկոյն պատիժ մը յարմար։ Երբ կը դառնային, հազիւ կէս ճամբան, Երկու չար տրղաք իր դիմացն ելան. կ'ուզէին կրռուիլ, վընտաել իրեն, Ու կը պոռային. «Մ'անցնի'ը այս տեղեն:» Իր Տումբան կարած արդել բ կ՝բլլային(1) • Բայց Պիժուն յանկարծ հաչելով ուժգին Իր սուր ակումներն անոնց ցոյց տրւաւ , Եւ արդաւըն իսկոյն փախան րչապաւ(2): Պօղոս այն ատեն համբուրեց Պիժուն. «- Դուն ինձմե լաւ ես, շունիկս իմ սիրուն, Դուն չես բարկանար, ոտ.բրս կը լըզես. Իսկ հրա չար տրղաք վրրաս յարձակին,

Իսկոյն աչ քերէդ բոցեր կը ժայլժ քին ։ Տղաք կը սոսկան հաջելէդ անգամ։ Իմ աղուո՛ր Պիժուս, անգի՞ն(4) բարեկամ ։»

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Մի՛ Եվնասեք կենդանիներուն. անոնք շատ անգամ օգտակար կ՚րչլան ձեզի եւ կը պաշտպանեն զձեզ թշնամիներու դեմ։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (¹) **Ա**ոգելք կ'ըլլային.—Չէին թողուր:
- (2) Commune.—Tous ones:
- (8) Գգուանքով.—Շոյելով:
- (4) **Անգին.**—Շաs մեծ աrժէք ունեցող:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞վ էր Պիժուն։—Ի՞նչ ըրաւ Պօղոս Պիժուին։
—Դիմացնին ո՞վ ելաւ։ — Տղաքը ի՞նչ պոռացին։ — Պիժուն ի՞նչ ըրաւ:—Տղաքը ի՞նչ ըրին։—Պօղոս ի՞նչ ըսաւ այն ատեն Պիժուին։

37. ሀ. ሀሀቦዓሀኑ ሀሀዓር

ոտե դն ախախ սշաբուն» ։ թվետյերբեսուր ու ճայերևուր . այս իեխիսւր խահովագ «Ոյոշև արուրիս շեր է , նսաւ փաճեխի Ոաևեիս իե

արթը չուրչը , արչադեր սատարևան խոստանար ջաչի որընե ղունքը կորոն, քանարեր սատարևան խոստանար ջաչի որընե ղունքը իսխրո , քանարև վատարարար կրատ ընե որ անարև արևարև վատարարար կրատարար

արութան որ աղեկ մը եփի»:

արտաւ, որ աղեկ մը եփի»:

ջմածն՝ այս խոսքրեն հորքով՝ որուր քան աևստոն,

Այն ատեն սպասուհին վարպետութիւն մը ըանեցնելով, ըսաւ անոնց «ինելօք կեցէ՛ք, այսօր սարսափելի աղապիւընչկ մը կը պարտի փողոցները, և անառակ տղաքը տոպրակը կը դնէ կը տանի ։ ԵԹԷ չլուէք, սագը անոր կու-

Մանուկները այս խօս բերուն կարեւ որու Թիւն չտուին

ր, որույր ու, և ուբեր անաչատն(չ) սև ուսեն երև :

Սպասուհին պատուհանը բացաւ, չանփուրը առաւ և պատուհանեն դուրս երկնցնելով, ըսաւ. «Մ.ո., ալապիւ-ճիւկ, սա սագը դուն կե՛ր, անուչնե՛ր ըլլայ ։»

—Ծնորհակալ եմ , պատասխանեց հաստ ձայն մը

փողոցեն

Ճիչդ այդ վայրկեանին անօթի գող մը կանցներ ցած պատուհանին տակեն, որ չամփուրը անցուած սագը յաշ փչտակելով փախաւ ։

Մանչ աղջիկ սկսան աղաղակներ արձակել, ողբալ, Հչել(4)։ Մայրերնին այս աղմուկները լսելով, , քովերնին

վազեց և պատահածը իմանալով՝ ըսաւ .

Bhung սպասու հիին դառնալով .

«Քանի՝ քանի անգամ պատուիրած եմ քեղի, ըսաւ, որ ատանկ սուտ բաներ չպատմես տղոց ։ Անմիտ անհնաշ զանդութիւնդ պատժելու համար, ամսականեր վար պիշտի դնեմ սադին և չամփուրին դինը» ։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(2) Պոռչտալ.—Պոռալ կանչել։

(3) Ճչել.—Սուբ ձայներ հանել։

⁽¹⁾ Շաւնփութ.—Սուբ երկաթ որուն վրայ միս կ'անցընեն եւ կը

⁽⁴⁾ Որկրամոլութիւն.—Շաջակերութիւն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Սարգիս ի՞նչ ըսաւ իր եղբայրներուն եւ բոյրերուն:—Երբ մութը կոխեց աղաքը ի՞նչ ըրին: — Սպասուհին ի՞նչ ըսաւ տղոցը։—Տղաքը այս խսսքերը լսելով ի՞նչ ըրին։—Սպասուհին ի՞նչ ըսաւ։—Մանուկները լռեցի՞ն։—Այն ատեն սպասուհին ի՞նչ ըրաւ:—Փողոցէն ձայն մը ի՞նչ պատասխանեց։—Ո՞վ էր այդ խսսքերը ընողը։—Տղաքը ի՞նչ ըրին։—Մայրերնին երբ պատահածը իմացաւ, ի՞նչ ըրաւ։



38. ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ամեր, թղ ալ դիտե, ը սա երդը զոր կերդեն հայ աղա, թ Վարդանանց աշնին օրը.

Իմ հայրենեաց հոգիս Վարդա՛ն, Սառ՛ւչ Վարդան,

Հոգիս հոգւոյդ եղնի ղուրպան(1), ևլն. ւ

Այս եիգը չինուած է քաջ Վարդան Մամիկոնեանի
համար, որ տասնըհինդ դար առաջ 1016 ուրիչ քաջերու հետ նահատակուեցաւ(2) Հայաստանի մէջ ։

Սյն ատենները Պարսիկները կրակը կը պաչտէին, և իրենց Թագաւորը ուղեց որ Հայերն ալ կրակապաչա ըլլան ։ Վարդան որ Քրիստոնեայ զօրավար մըն էր, դէմ գրաւ. և հայ քանբևու ժքուիսն արձագ, ողուրձ վնայ հաևծակեցու :

Ցաղկերտ չատ զօրք գրկեց Հայաստան, և Աւարայրի դաչաին մէջ երկու բանակները պատերազմեցան իրարու

Shur :

Պարսիկները իրենց հետ չատ մը փիղեր(3) բերեր էին, որոն ը իրենց բանակին առաջ քը տեղաւորուեցան ։

Ս.յն ատեն տակաւին հրացան չկար. հեռուէն նե-

unif (4) 4p 4nm 4/50:

Հայերը մեծ .թաջու Թեամբ կոուեցան մինչեւ իրիկուն, րայց Վարդան ըարնուեցաւ ու մեռաւ . իրեն հետ ժեռան նաև բազմանքիւ իրա գօրավարներ, ու Հայերը ցրուեցան ։ U. ju ժամանակէն իվեր ձիչդ 1462 տարի անցած է, և Հայերը ամէն տարի մեծ հանդեսներով կը տօնեն քաջ Վարդանի և իր ընկերներուն յիչատակը :

FUBUSPNԻԺԻՒՆՆԵՐ


(1) **Եղնի ղութպան.**—Մէկուն համաr մեռնի։

(2) Նահատակուիլ. - Մէկը կամ բան շնը պաշտպանելու համաr մեռնիլ:

(3) **Փիղ.**—Մեծ կենդանի մը ու պատին ունի:

(4) **Նետ.**—Հին աsենները գործածուած զէնք մը որ սուր ծայրով երկաթ մըն է եւ լարի մը վրայ քաշուելով կը նետուի:

ZUՐՑՈՒՄՆԵՐ.—Ի՞նչ երգ կ'երգեն Վարդանանց տօնին օրը:— Ո°վ է քաջ Վարդան:-Ի°նչ ըրած է։ - Ո°ւր նահատակուեցաւ։ вազկերտ ո՞վ էր։ — Ի՞նչ առաջարկեց Հայերուն։ — Հայերը ընդունեցի՞ն։ — Վարդան ի՞նչ ըրաւ։ — Ո՞ւր պատերազվեցան։ ետքը ի՞նչ պատանեցաւ։—Այդ պատերազմէն իվեր քանի՞ տարի անցած է։



39. 4ሀՏበՒՆ ԵՒ ՄՈՒԿԸ

Ծակին մեջեն օր մը մուկը տեսաւ կատուն : -«Ինչո՞ւ համար, ըսաւ չարիք կ'ընտս մեղ դուն խեղճ մուկերը հասցուցած չեն քեղի վընտա. Եթե ճանչնաս դանոն,ը դուն գոհ պիտի մընաս: Գիչեր ցորեկ ինչո՞ւ ըզմեղ կը հալածես(1). Կ'ուղե՞ս , , քեղի բուժին հանես՝ (²) կերած հացէս ։ Եւ հայարւին,ը, մահրմանանը իրարու հետ, 4 pp + சம்(3) பட ஓ டிம்(4) யு மிந்ற மிந்ற நிழ நிழும் மிம்கொரு (5) -Բարի մուկ մը կերեւաս դուն և խելացի, Այդ խօս, քերըդ բարձր ու վըսեմ (6) չատ սիրեցի. կ'ուղեն դրեղ մօտէն տեսնել. ելի'ը ծակէդ, Ցուցո'ւր ինձի սա անուշիկ հասակրդ դէթ(⁷) ։ Ս.ուաց եկո՛ւր, ի՞նչ կը վաինաս, անոր կ՛ըսէր. ես ոչ քեղի, ոչ քու ցեղիդ չեմ վընտսեր :» Մուկն անկառենն ելու ծակէն տոտիկ տոտիկ. Կատուն ցատջեց ու զայն ըրաւ բըզիկ բրզիկ ։

FULP 13U.4U.L . — Միշե զգոյը կեցե՛ք շողոքութներեն:

many demined more sundament sold

eususrnh#hhbbtr

- (1) **Կը հալածես.** Ե**ջեւէս կ'իյնաս**:
- (2) **Բաժին հանեմ.**—Մ. ս մր չամ։
- (3) Վրէժ.—Չարիքի փոխարեն չարիք: of was of maybell played free was
- (4) Քեն.—Հակառակութիւն:
- (5) Անհետ րլյան.—Վեrնան:
- (6) Lubaf.—Tus purår:
- (7) 9-tp.—9-nfit:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Մուկը զո՞վ տեսաւ։ — Ի՞նչ ըսաւ անոր։ — Պատուն ի՞նչ պատասխանեց։

40. FN24C

Trucketty the type of

հեղճ պարտիզպան մը, իր պարտեղեն, ահագին(1) գողկ(²) մր հանհայ որուն վրայ ամէն մարդ կը հիանար ։ Ու առաւ տարաւ դայն գիւղապետին որ հարուստ մարդ մըն էր, և դալտերուն ու պարտէգներուն մշակութեան մեծ հոգ կը տաներ:

Ուստի աղուոր բողկը տեսնելով, գովեց պարտիզպանին աշխատունքիւնը, չնորհակալ եղաւ ու երեք ոսկի արևեր աուաւ դայն .թա ալերելու համար ։

Գիւղին մեջեն, արարակապան մր, որ հարուստ, րայց ծակաչ թ³) էր, երը այս բանը իմացաւ, ըսաւ hu மிரரிம்.

«Գեղեցիկ հոր (4) մր ունիմ . անմիջապես գիւղապեայն տանին ենք բողկին համար երեք ոսկի տուաւ, իմ Sapple Surdup of aport fits uport muj 1)

Իսկոյն կենդանիին վիգեն չուան մր անցուց ու դիւղապետին տանելով, աղաչեց որ ընդունի իր նու էրը :

արսե դիայեն երաշան իրը գերաբեւ արախ չառինաւ հարաարը չատ արար գերաբեւ արախ չառինաւ

գած է իրջի ։

— Քարի սև այեքափ ի ասաներ և իրբե արժաղը աևարութի անարեր երեն արժաղը աևհարի սև այեքափ ի ասաներ և իրբե արժաղը աևհարի և անարեր և ասան ար չանների բևբն արժաղը աևհարի և անարեր և ասան ար չանների երեն արժաղը աև-

Ար չարրն ահանականիր, հատագրնու չաղան արան բաժի ասուտու աժանականարը, հատագրնու չաղան արան գա-

FU. P. 13U.4U. E. — Ծակաչք մաողը ոչ մեկեն կը սիուի:

PUBUSINAPARTUEL

- (1) **Ահագին.**—Շաs մեծ:
- (2) Angh.—fnju up (pnir):
- (3) **Ծակաչք.**—Չկշջացող:
- (4) Հութ.—Կովի ձագ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ․ — Պարտիզպանը ի՞նչ տարաւ գիւղապետին։ — Գիւղապետը ի՞նչ ըրաւ աղուոր բողկը տեսնելով։—Ծակաչք ազա-րակապանը ի՞նչ ըրաւ, երբ ասիկա իմացաւ։—Ցետոյ ի՞նչ ըրաւ.— Գիւղապետը ի՞նչ ըսաւ անոր։—Ի՞նչ նուէր տուաւ փոխարէն։

41. LበԻՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Այս տարի, չատ դեղեցիկ մրցանակ մը ստացայ» կաչիէ ոսկեզարդ կոդքով սքանչելի դիրք մըն է, որուն մէջ չատ մը պատկերներ կան, ու չատ մըն ալ պատմու-Թիւններ և չահեկան տեղեկուԹիւններ։ Այդ գիրքին մէջ կարդացի թե հիմակուան մարդիկը աւելի աղէկ լուսաւորուած են քան առջի մարդիկը և

Հինաւուրց(1) դղեակներու (2) մէջ գործածուած ջահեըու (3) պատկերներ կան այս գիր,քին մէջ, և անոնց քով ճրագներ(4)։ Մեծ մայրիկս կ՝ըսէ Թէ ժամանակաւ այդճրագներէն կը վառեն եղեր իրենց տանը մէջ։

Գիր.թին մեց խսսուած է նաև մեր հիմակուան գործա-

ֆած մոմերուն և քարիւմի(ը) քաղանուրդենուր վետն։

գան նաև ելեկարական լուսաւորութեան վրայ տեգեկութիւններ զոր մեր դիւղին մէջ տեսած չենք։

Այդ գիրքը կարդալէս ի վեր մեծ փափաք ունէի

արորբեսո ինավար ծաչբև ը ընրկանակար քաղաքանրբև ։

Արնաալ չարխու մեր գիւղին մէջ իրարանցում մը կար, մեր գիւղին աշտականառին օրն էր։ Մեծ բազմու- գիւղերեն ու քաղաքներեն վաճառորդներ անսակ անսակ արտանան եր հրապարակին(⁸) վրայ, և բոլոր մշտակայ

Ասդին անդին վրաններ(8) կանդներ էին։ Երբ իրիկուն եղաւ, փափաքիս հասայ։ Խումբ մը մարդիկ «պո՜ւմ, պում» Թմրուկ(8) կը դարնեին, ուրիչներ զուռնայի մը ձայնով կը պարէին։ Եւ քանի մը դեղջուկներ խոչոր ջահեր բռնած էին ձեռքերնին որոնք կը վառէին սև մուխեր արձակելով որ մարդուս աչքերն ու կոկորդը կ՝այրէր։

Սկսայ հազալ, և աչ քերես արցուն ք եկաւ , բայց քիչ

մը հեռուն հրաչալի տեսարան մը կար ։

կապիկններու խաղարան մը հաստատեր էին մեծ չէնքի մը մէջ ուրկէ արձակուած լոյսը հրապարակը կը լեցներ ։ Մեքենայ մը արագ արագ դառնալով կը լուսավառէր լամպարները ցորեկուան լոյս մը տարածելով ամէն կողմ ։ Մեքենան խոչոր հոլի մը պէս ձայն կը հանէր , և երբեմն կայծեր կը ցատքեցնէր ։ Այս էր ելեկտրական լոյսը ։ և քրարիկ բուն սև չիր տաբորբեն աչխանչ ճ Հբուն բիաջ

rad Dankarthbunk

FU8USPNԻԺԻԻՆՆԵՐ

(1) Հինաւուրց.—Հին ժամանակի:

(2) Դղեակ. — Թագաւուներու կամ իշխաններու բնակարան:

(3) Ջահ.—Վրան կուպր քսուած ցուպ զոր կը վառեն։

(4) Ճrագ.—Ոչխարի ճարպով շինուած մոմ (հաղ մոմը):

(5) Քաrիւղ.—Մեr հիմակուան վառած հեղուկը (կազ):

(6) Հրապարակ. - Փողոցին մէջ լայն չեղ մը:

(7) **Ցուցադրել.**—Մէջջեղը դնել ցուցնելու համար:

(8) Թաքրուկ. - Տեսակ ար գեղջուկ նուագի գործիք (suynez):

(9) Վրան.-Լաթէ շինուած պատապարան (լաspr):

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Այս տարի մրցանակ ստացած գիրքիդ մէջ ի՞նչ կարդացիր։—ի՞նչ պատկեր տեսար այդ գիրքիդ մէջ։ — Այդ գիրքը կարդալէդ ետքը ի՞նչ փափաք ունեցար։—Անցեալ շաբթու ինչո՞ւ իրարանցում կար ձեր գիւղին մէջ։ — Տօնավաճառին ի՞նչ կը բերեն գիւղը։—Երբ իրիկուն եղաւ, ի՞նչ ըրին։—Հասկցա՞ր թէ ձին ատենները ի՛նչ լոյս կը վառէին մարդիկ։ — ելեկտրական լոյսը ի՞նչպէս էր։

42. 4U L U U F C

Երկու մեծկակ արղաք, Արսէն և Գասպար
Պարտէզի մը պատին քովէն կ'երժային.
Արսէն ըսաւ. «Սա կաղամբը տե՛ս, աղբա՛ր,
Ի՞նչ խոչոր է, ի՞նչ աղուոր, ի՞նչ ահագին։
—Ատ ալ բա՞ն է, գոչեց Գասպար հեղնութեամբ,(¹)
Մեր մատուռին ղանդակատան չափ խոչոր

Ես կաղամը մը տեսած եմ, բայց ի՞նչ կաղամը « —Ես ալ, ըսաւ, չինեցի դեռ անցետլ օր



Մեր մատուսին մեծութեամբ սան(²) մը խեցի(³)։

—Ինչո՞ւ այդչափ մեծ չինեցիր, տընաչէն(⁴)։

—Չըհասկցա՞ր, ապո՛ւչ, դիտմամբ չինեցի
Որ քու կաղամբդ այդ սանին մէջը խաչեն»։

թև Իր 10 և 10 և և և անոնց վրայ չի խոսիր։

ծերը չի մեծցներ, եւ անոնց վրայ չի խոսիր։

PUBUSPNHPHHTTLP

- ((1) Հեգնութեամբ.—Ծաղբելով:
- (²) **Սան.**—Կեռակուբ եփելու աման:
- (3) Խեցի.—Հողէ շինուած եւ փուռի մեջ եփուած նիւթ։
- (4) Տնաշեն.—Տունը շէն պահող (հոս հեգնութեամբ ըսուած է):

